

Արևելահայաստան

10
ՓԲՅ

Պատու

10
ՓԲՅ

Ա. ՏԵՐԻ

1873 ՀՈՒՏԵՄԲԵՐ 23 ԵՐ. ՔԱՅԻՍԻ

ԹԻԻ 44

Ա.ՂԳ

Յառաջիկայ շաբաթ օր ԱՐԵ-
ԻՆԼԵՍՆ ՓՈՂՐ Մանգու մէկ
դիրքով հատը 10 վարացի հրատա-
րակելու համար տարաբանացի այլ
և այլ պիտոյից նախապատրաստու-
թեան հասն արտել ք ետաճ Է ետ Է
ուան թերթերնուս հրատարակու-
թեան :

Այս առ թիւ հարկ կը համարիմք
նաև ծանուցանել որ Արեւելեան Փող
վազը և ուրբաթ օր ալ չպիտի հր-
ատարակուի :

Ա.ՂԳԱՅԻՆ

ՕՐՍԳՐԻ ՀԱՆՆԵՒՈՒԿՆԵՐԸ

« Երբ Պատրիարք եղաւ Խրիմ-
եան, Ազգային ժողովն անուամբ կար
և իրօք չկար, ինքը զայն վերակառ-
մելով և Ազգին համակրութիւնն ու
վստահութիւնը վայելելով, ժողով
մը գոյացուց մեզ, ինքն անոր գոր-
ծակից ըլլալով :

Ինքը Պատրիարք ըլլալէն վերջը
հանգանակութեան մը գիծեց և Ազ-
գին կեդրոնական պարտքը մեծ մա-
տամբ տալ յաջողեցաւ :

Իր Պատրիարքութեան օրով
կոտակայ, իգարոցական և վանական
հրահանգներ պատրաստուեցան :

վաւերացան և գործադրութեան գը-
րակեցան :

Իր Պատրիարքութեան օրով Յե-
րացի դերեզմանաւան մեծ վանագը
հեռացաւ :

Իր Պատրիարքութեան օրով ա-
մեն կարգի ազգայինը Սահմանադ-
րական ընկժաց բին ընտելանալ սիջ-
ւանալով ամենաւա իրան և
Խրիմեանի Պատրիարքութեան օրով
եզան » :

Օրագիր «Ե» ԲԻ- 1011

« Խրիմեան ինչ բրաւ իւր
Պատրիարքութեան օրով բոլոր միայն
Պօլոյց ամեն թաղերը խառովեց » :

Օրագիր «Ե» ԲԻ- 1053

« Խրիմեանը ֆաղտարական ժողո-
վոյ դէմ արգելքներ կը յարա ցանկ,
և թէ ֆաղ, ժողովը կոխադներն ու
ժողովականները ձեռնարկին ամենայն
համարձակութեամբ Պատրիարքին
քով իր բն մտերիմ կը յաճախեն » :

Օրագիր «Ե» ԲԻ- 1053

« ֆաղ, ժողովը նչ միայն Սա-
մաթիոյ խառտարան է, այլ և անոր
Լէնկիմիսուն է, այլ և Ազգական
խնձորը Սամաթիոյ մէջ միշտ վստ-
պահելու քաղաքականութիւնը բը-
նաճ է » :

Օրագիր «Ե» ԲԻ- 986, 964, 1000

« Այս տեսակ ֆաղ, ժողովը
հարկաւ ժողովարանէն դուրսիւր վե-
ոքնաուի ալ, կը ձեռնուի ալ » :

Օրագիր «Ե» ԲԻ- 1025

« ֆաղ, ժողովը իւր անիմաստու-
թեամբն և անհեռաւանութեամբը
նոյն իսկ իր ձեռք տկարացած է
Բ. Կրան առջեւ » :

Օրագիր «Ե» ԲԻ- 992

Ներկայ վարչութեան օրով ժո-
ղովրդականութիւնը հարուածոյ
ենթակայ կը գտնուի :

Օրագիր «Ե» ԲԻ- 1018

Արդի ֆաղ, ժողովը անամ ա-
պիկար վարչութիւն մը ազգը ընա-
ուենցած չէ :

Օրագիր «Ե» ԲԻ- 1000

Այս տեսակ վարչութեան մը
ընաւ չներէր Սահմանադրութիւնն
որ Պատրիարքարանի մէջ կենայ :

Օրագիր «Ե» ԲԻ- 992

« Խրիմեան պատկառի գործունեայ
ֆաղ, ժողով մը խարդախ անուա-
նաճ ըլլալուն համար պատուոյ փո-
խարկութիւն մը պէտք է ընէ » :

Օրագիր «Ե» ԲԻ- 1051

« Խրիմեան առաջարկեց որ ան-
զական գործոց համար յանձնաժո-
ղով մը կազմեն և Պօլիս զատ դա-
ւատ մը ընեն, Խրիմեանի առաջար-
կութիւնը արգիլող օրէնք մը չկար,
տակայն ֆաղ, ժողովը չընդունեց,
Խրիմեան չհարցուց, ֆաղ,
ժողովը զԽրիմեան յանուն օրինաց
խարկեց » :

Օրագիր «Ե» ԲԻ- 1009

« Խրիմեան կառավարիկ Պօլիս
զատ գուտաւ մ'ընել իր գործերն
ինք տնօրինելու, ինչ ըսել է, այս

դիտաւորութիւնը Աղգ. ժողովրդաձեռքէ և ներքին մեծ և ահագին շփոթութիւն մը յարուցանելէ աւելի նշանակութիւն մը չունի:

Օրագիր գե. ԲԻ- 991

Հանրագիրն ստորագրող Երեսփոխանք ճշնումն ազատ մնալու միտք և դիտաւորութիւն ունեցած չեն:

Օրագիր գե. ԲԻ- 1051

— « Գաղթական նախ մէջ, բռնէ և ճշման տակ, անկարելի է վիճարանիլ ազատօրէն »:

Օրագիր գե. ԲԻ- 1055

« Այս անկարգութեան և ծանրակշիւ դեպքին պատասխանատուութիւնը Ս. Պատրիարքին վրայ կը ծանրանայ »:

Օրագիր գե. ԲԻ- 1052

— Խռովայններու կողմէն պատահած անկարգութեան մասին դիւանը պատասխանատու կը մնայ Բ. Դրան առջև:

Օրագիր գե. ԲԻ- 1044

Հրատարականք ուղեւոր, եթէ չ'տայ կառքեր հեծնանք և Մեծ Եպարզութիւն եղծանք:

Օրագիր գե. ԲԻ- 1553

— Մենք իրեն հրատարականք սուր չըսինք և չը պիտի բռնենք:

Օրագիր գե. ԲԻ- 1057

Օրագրի ուրբաթ առուր թուոյն մէջ կարդացինք թէ Ս. Պատրիարքն Երուսաղիմաց 74 և 75 տարիներուն մութթութեանն առած է, որ 36 հազար զրուշի գումար մը կը կազմէ եղեր:

Երուսաղիմաց տունէն մեր առած տեղեկութեանց նայելով Ս. Պատրիարքը ոչ թէ 36 հազար զրուշայլ գիւրք առեր է 36 հազար զրուշի ի հաշիւ իւր ամականին:

Ս. Պատրիարք Հօր առ Երեսփոխանութեան Գ. Ատենապետն ուղղեալ գրութեան պատճէնը կը փութանք հրատարակել, որով դատաստանի պատրաստ ըլլալն կը յայտնէ:

« Վսեմաշուք Գ. Ատենապետ Աղգ. Ընդհ. ժողովոյ:

« Թերևս ընդ և գիտէ իսկ ձեր վսեմութիւնը որ ասիէ յառաջ մեր կրկնակի հրատարակին ուղղեցի առ Ս. Ատենապետ Յարութիւն և ֆէնտի Տատեան, բայց նա իւր հրատարակին յառաջ բերելով մեր հրատարակին առ մեզ վերագործաց. և որովհետև Բ. Ատենապետ վսեմ. Ստեփան բաշան ևս ՚ի միտքս հրատարած է Ս. Ատենապետին հետ, կը մնայ ձեր վսեմութեան որ բնութենելով մեր հրատարակիլը մատուցանէք զայն Ընդհ. ժողովոյ ատենին:

« Բնաւ չեմ կամիր որ վերջին հրատարակիրս նորէն ուշադրութեան առնուի և կամ Ընդհ. ժողովոյ վիճարանութեան նոյն ինք ընծայէ, վասն զի ինչպէս ինձ համար վերջացած է Պատրիարքի հրատարական ինչիլը, ամենայն որտէ կը փախաքիմ որ Ընդհ. ժողովն ևս իսպառ վերջացած համարելով զայն, ձեռք առնու օրուան ինչիլը, որ ազգին համար ամենահարկաւոր են:

« Կողտեմ որ յայտարարէք նաև Ընդ. ժողովոյ բարձր ատենին, թէ իրիմեանի իւր կրկնակի հրատարակիլը երբէք խուսաբել չուզեր այն ամբատանութեանց երեսն զարս հրատարեալ Բագրաբան ժողովը տասնևմէկ յօդուածով հանց Գննիչ ժողովոյ ատենը, երբ, սուր և սրով կերպիւ որ կը հաշի ընդհանուր ժողովը՝ պատրաստ եմ ըստ ամենայնի պատասխան տալ և կամակար խնարհիլ իմ դատաւորին առաջ. Ս. յո ամբատանութեանց հետ պէտք է նաև բնութեան առնուի յուրիս 31 ի Աղգային իշխանութիւնը հարուածող դէպքը, որոյ առաջնորդ և մտաբնու կը համարին սմանք զիրիմեան, և կը ջանան այդ յանձանքն ևս յանիրաւի նորա վրայ բարգել: Ս. յո ամեն կայթակղութիւնը պէտք է ձեռնհաս և բըննող ատենի մը առաջ անաչառապէս բնութին, որպէս զի որ անմեղ են ազատութիւն չարախօս զրպարտութենէ, իսկ որ պատժապարտ են, պատասխանատու մնան ընդհանուր ազգին առաջ:

13 հոկտ. 1873

ԽՐԻՄԵԱՆ

Ի Պատրիարքարանի Հայոց:

ՔԱՂԱՔԱԿՍՆ

Մագ-Մահոն Մարաջազան յետ ընդ երկար ըուութեան տակաւ առտակաւ մեծամասնութեան հետ իւր յարաբերութիւնքն սկսած է:

Յայտնի է որ այս վայրկենիս նա իւր բարձր դիրքէն իջնելով իբր հանրապետութեան առաջին պաշտօնէսց՝ և իբր բանակի դիւանոր հրամանատար՝ միապետութիւնը հաստատելու համար վարուելու ետեւէ է:

Երկու եղբուրթիւնը զայս կը հաստատեն:

Ամսոյս '21 ին մէկ քանի երեսփոխանք Պ. Թիւրի յաջորդին երթալով կը հարցունեն թէ արդեօր իւր իշխանութեան երկարաձգութեան մասին տարածուած զրոյցներն ստոյգ են: Մաճեթի վաւեր ստակէս կը պատասխանէ:

Ինչպէս որ իբրև զինուոր միշտ երկրիս ծառայելու ստիպուած եմ, իբր քաղաքական մարդ ալ կը բողբեմ բացարձակապէս իմ վարած իշխանութեանս միտոս մի բանդաբազայի մէջ ինձ ընծայուած գողափարին վրայ:

Ես պաշտարանողական մեծամասնութեանն ընտրուած եմ և բնաւ անկէ չպիտի զատուիմ:

Բնալ աղէկ կը տեսնենք թէ ինչպէս Մագ-Մահոն անորոշ կերպով իշխանութեան գլուխն անցնի որոշած էր, սակայն իւր վերջին յայտարարութեանն ինչպէս կերևայ ընտրուած է այն անձինքնէն՝ որ զինքը իշխանութեան գլուխն անցուցած են:

Ասի այն աստիճան ճշմարիտ է որ միապետութեան յայտարարութեան դէմ եզող դաւառական երեսփոխանները իւր ներկայութեան ընդունել չուղեց. բնութեմ կառավարութիւնը երկրին անդորրութեանը պիտի աշխատի միշտ:

Բնաւ կատկածել հարկ չկայ ուրեմն:

Մագ-Մահոն մարաջախոն հետ ընդ երկար վարանման վերջապէս միապետականաց նպատակին ծառայելու որոշած է:

ՀԵՌԱԳՐԱԼՈՒՐԲ

ԱՍՏՐՈՒԹՅԱՆ ՀՈՒՆԳԱՐԻԱ

Վիեննա 30 հոկտ.

Պանդ նասիօնայր դրամական կայսր թեան բարս սրման մասին կառավարութեան ընկերք օգնութիւնը կը հաստատուի :

Երեկ 8 հոգի քօլէրայէն բռնուեցան :

Վիեննա 31 հոկտ.

Կը հաշուէ թէ վերջին ընտրութեանց 1/3ը պաշտպանողական են :

ԳԵՐՄԱՆԻԱ

Պերլին 30 հոկտ.

Պորտան օգնութեան է :

Գերմանիոյ պանդային մէջ շատ գործեր եղան :

Պերլին 30 հոկտ.

Պորտան աղէկ է :

Գերմանիոյ բոլոր պորտաներուն մէջ խիստ շատ գործեր եղան :

ՏԱՃԿԱՍՏԱՆ

Պերկրատ 30 հոկտ.

Միլան իշխանը իւր ճամբորդութեան զարձաք մոզովուրդը սիրտիւր համակրութեամբ մ'ընդունեց զինքը :

ԳԱՂՂԻԱ

Բարիզ 31 հոկտ.

Լրագիրք Շամպորի կոմսին առ Պ. Շինըրնիկ ուղղեալ մէկ նամակը կը հրատարակեն որուն մէջ կոմսը իւր ասկէ յառաջ բրած յայտարարութեանց անխոփփոս պահելը կը յայտնէ :

Բարիզ 31 հոկտ.

Երեսփոխանաց մէջ յուզմունքը կը շարունակէ : Միապետութեան վերահաստատութեան գործը կատարուած կը համարին : Պահպանողականք Մադամա հոն մարաջաստին իշխանութեան պայմանաժամը երկարաձգել կը խորհին :

Աղղային խորհրդայն ձախակողմեան անդամք կը պնդեն թէ հասարակապետութիւնը հաստատ պիտի մնայ :

1874ի պլանտէէն 18 միլիօն ֆրանք աւելցած է :

ԱՏԳՂԻԱ

Լօնտրա 31 հոկտ.

Պորտան դոյ է :

Դրամագեղը 8 0/0 բարձրացու :

ՆԵՐՔԻՆ

Կիրակի օր արտաքին գործոց պաշտօնեայ Ռաշիտ փաշա Բերա ելնելով Ռուսիոյ իտալիոյ և Աւստրիոյ դեսպանաց զատ զատ այցելութիւններ տուած է :

Պաշտօնէ դադարեալ Ռիդա փաշա շաբաթ օր Բ. Դուռն երթալով Մեծ Եպարգոսին հետ երկար բանակցութիւն մ'ունեցաւ :

Պանայի ընդհանուր կառավարիչ Մուստաֆա փաշային տեղ Սելանիկի ընդհանուր կառավարիչ Սքիֆ փաշան յաջորդեր է :

Վեհ. Կայսրը Սամսի իշխան Դոստաքի Ասոսիտի փաշային Մեծ Ճիտիլէի առաջին կարգի պատուանշանը շնորհեր է :

Թիւրքիոյ Պրիւքսելի փոխ հիւպատոս Պ. Սիֆօսս ալարտ՝ վախճանեալ Պ. Գիւստափի տեղ հիւպատոս կարգուեր է :

Կրսուի թէ կատարողացի Դայմագամ Էմին էֆենտին հրամարուեր է իւր պաշտօնէն, սակայն բաւական առնէ նորա փոխանորդութիւն ընող Պանեալիւզայի Միւթասարքը չը պիտի կարենայ նոյն պաշտօնին հասնիլ :

Սելանիկի Կորընիար կուսակալ Միսահաթ բաշա իւր պաշտօնատեղին երթալու համար այսօր մայրաքաղաքէն պիտի մեկնի :

Կրսուի թէ Բերայի մէջ դարձեալ ջուրի պակասութիւնն երևան գալ սկսած է, գրեթէ աղբիւրներուն ամենքն ալ չցամքեր են :

Էնկիւրիի դրուածին նայելով երկու ճանապարհորդ, կեսարիայէն Էնկիւրի դոյցած ատեննին, ճամբան հինգ աւազակք վրանին յարձակելով, այս երկուքէն մին սպաննելէն վերջը կսկսին երկուքին Վրայ ալ խուզարկել, որոնց վրայէն ընդ առնելը 800 զրշի չափ ստակ կենէ :

Քաղաքիս բնակիչք սատիկ յուզուած են այս եղելութեան վերայ, զի այս երկու ճանապարհորդք ալ մեծ յարգ ունէին քաղաքացոյքս :

Կրսուի թէ տեղական իշխանութիւնն անմիջապէս չարադործները բռնելու համար խուզարկութիւն ընել սկսած է :

Վաղը որ Բամազանի 15 նէ Հըրքայի Ներիֆին չափն ըլլալով ըստ սովորութեան Վեհ. Կայսրը՝ Շէյխ-Իւլ-Իսլամ էֆենտին, Մեծ Եպարգոսին և ուրիշ պաշտօնակալաց հետ այս կրօնական հանդիսին ներկայ պիտի գանուի որ թօփ-Գաբուլի հին պալատուն մէջ տեղի պիտի ունենայ :

Այս առթիւ Բ. Դուռն և ուրիշ պաշտօնատուերք գոց պիտի մնան նոյն օրը :

Ուրբաթ առաւօտ նորածին մանկան մը դիակը գտնուեր է Սեւ գաբանի ծովեզրէն :

Տեղական մէկ քանի թերթեր կը հաւատան թէ Անդղիոյ դեսպան Սըր Իլեօթի տեղ Սըր Հէնրի Սիօքք պիտի անցնի :

Անցեալ չորեքշաբթի օր կէս օրին միջոցները Ղալաթիոյ աշտարակին պահապանը Գատը գլուղ կրակ կայ ըսելով բնականաբար յիշեալ դիւղի բնակիչք իրար անցնելով անմիջապէս Գատը գլուղ երթալ աճապարեր են, բայց հրդեհի նշոյլ մը անգամ չեն գտեր :

Նոյն օրը Պէշիւք-Տէրէի Բալաֆաթ Երին հրդեհ պատահելով տուն մ'այրեցաւ :

Հինգշաբթի առաւօտ ալ Գանալիլի քեօշի մը մէջէն բռնկելով այրեցաւ :

Ուրբաթ օր պատերազմական գործոց պաշտօնեայ Հիւսէյին Ալի փաշա իւր հետ ունենալով իւր երկու թիկնապահները Ռուսիոյ դեսպանատունը դոյցած է իկնաթիկով զօրապետին այցելութիւն մը տարու համար :

Պալա անուանով մարդ մը Պոնա նայի մէջ երեկ վաճառական սպան նած ըլլալուն ձերբակալուած և դատաստանը տեսնուելով մահուան դատաստարտուած էր, որնոր անցեալ չորեքշաբթի օր քաղքիս հրապարակին մէջ կախուեցաւ :

Ուղուենձա օվայի տօնախմբաւը եւրոպական ամօնյն 30 ին բացուելով ամեն կողմէ վաճառքներ սկսան հոն փոխադրուել :

Մաքրի-գիւղ՝ Եւրոպիոց Տաճկաստանի Երկաթուղեաց կայարաններուն ամենէն նշանաւորն է :

Եւ գրեթէ երկու տարիէ ՚ի վեր թէ հոն բնակող բնասիրքը և թէ շրջապայելու համար հոն յաճախող մարդկանց բազմութիւնը Կ. Պօլսոյ շրջապայից այս ամենաբազմամբոս գիւղերէն մին զուարճալի յիշար մը դարձուցած են :

Օդը խիստ աղէկ և բարեխառն, տեղագրութիւնն գրեթէ նկարչական բեղմնաւոր այգիներու և խիստ բարձրաւած պարտէզներու մէջ կառուցուած ըլլալով և անհուն տարածութեամբ աւազալի ափունք մը սղորդ ծով մ' ունենարովը :

Այս վիճակին մէջ յուսալի է որ Բերայի բազմաթիւ բնասիրք սոյն գիւղս գան գարնան եղանակին մէջ արդէն թէ քարուկիր և թէ տախտակաշէն տունը զարմանալի արագութեամբ կը շինուին :

Այս գիւղին բնակիչք գիւղի մը բնակիչք ամեն զբօսանքներն ալ միացեալ կը գտնեն հոն. Թաջնարոս, Թիւն, ձկնորսութիւն, պտոցտ և նուագարան :

Բազմաթիւ կաղնիներ շինուած են որոնք ոչ միայն զուարճալի ցայ գահանդէսներ այլ նաև ներկայացումներ ալ կուտան ուր Եէտի — Գուլէէն և մօտակայ գիւղերէն բազմաթիւ յաճախորդք կուգան :

Կը հաւատտեն թէ մօտ օրէն շուգենաւի բարէ նաւամտոց մը և Յունաց դպրոցին մասը հասարակաց պարտէզ մ' ա պիտի շինուի :

Անտարակուսելի է ուրիմն որ յաջորդ տարին սոյն գիւղս Գաաը գիւղի նման բազմամբոս պիտի ըլլայ և թէ այս վերջինը չը պիտի կըրնայ ունենալ այն ամեն հանդամանքներն՝ որով Մաքրի գիւղ պիտի զըւարճացնէ իւր բնակիչներն :

Տօլմա Պաղչէյի մօտ Թաշ Բըշլայի զօրանոցին մէջ հետեւեալ ոճրագործութիւնը պատահած է, զոր Լեւրնթ-Հէրալտ հետեւեալ կերպով կը պատմէ :

Չօրանոցին վնասորական իշխանութիւնները զօրականներն աչքէ անցուցած ժամանակ կը սքանկէն որ զօրականներէն միոյն ձեռքն ու գըլուխը վիրաւորուած էր :

Կը հարցնեն պատճառը և կը պատասխանէ թէ առջի օրը բիշ մը փախուցած ծխախոտով զօրանոցը դարձած ժամանակ, Յէրի քեջի մօտ մօտ երկու մարդ զինքը բռնեցին ձեռեցին վիրաւորեցին և ճըխախտար ձեռքէն առին :

Հարցաքննող սպան ինչպէս կերէի զօրականին այս բացատրութեանը հաւատարով՝ հիւանդանոց դրկեց զայն, միանգամայն եղելութիւնը Ոստիկանութեան իմաց տըրուեցաւ, որպէս զի զօրականը վիրաւորողները փնտռէ գտնէ :

Սմեն մարդ համազուած էր որ վիրաւորեալ զօրականը բռնութեան զոհ եղած էր, և ընկերներն ալ գուժ ու կարեկցութիւն կզգային անոր վրայ :

Սակայն երեք օրէն ետքը՝ զօրանոցին մէջ սպասուորող զօրականը վտրի բակն աւլած ժամանակին կը տեսնեն որ կիզուենն արիւն կը կաթէր, վեր կեխենք և փոքրիկ ննջարանի մը մէջ զօրականի մը դիակը կը գտնեն, զըլուխը մարմնէն բաժնուած և գետինն ալ արեամբ ծածկուած :

Սպաննեալ զօրականը՝ միւս վիրաւորեալ զօրականին մտերիմն ըլլալով գործը յայտնի կըլլայ :

Կը կարծուի թէ ասոնք ՚ի միտսին ծխախոտ փախցնելով, շոշը բաժնած ժամանակին մէջ քրնին կոխ ծագեր ու այս եղև ահան վախճանն ունեցեր է :

ԸՆԹԱՅԻՆ ԱՐԺԷԹՂՊՈՅ

Table with 2 columns: Item name and Price. Includes items like Ընդհ. Պարտ. Արժ. րաց, Գործար. Արժ. րաց, Գործար. Արժ. րաց, Գործար. Արժ. րաց, Գործար. Արժ. րաց, Գործար. Արժ. րաց, Գործար. Արժ. րաց, Գործար. Արժ. րաց, Գործար. Արժ. րաց, Գործար. Արժ. րաց.

Table with 2 columns: Item name and Price. Includes items like Քրկտի Ժէնէրալ, Թրամվայ, Ումլիի Արժ., Փոխառ. 69ի (անկարծի), 63ի, 63ի, Բըրօր.

ԾԱՆՈՒՅՄՈՒՆԻՔ

Ազգ. Հիւանդանոցի մամարանէն ելած թէ հասարակ և թէ հարսանեաց ևն. հանդէսներու համար ծագ կազարդ փայտն և գեղեցիկ մամեր կը ծախուին Չարմարձ. զարեզու Մեծ-Նոր խան միջնայտրի թիւ 49 Հիւանդանոցի գրասենեկին մէջ : Հարկ եղած ատեն կրնան ամէն ոք ամէն ատեն իրենց ուղած ձեռքն ու գիրքով մեզրամմ գտնել հոն արժան զնով :

ՊԱՅՄԱՆՔ ԲԱՍՏԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ

ԱՐԵՒԵԼԵԱՆ ՓՈՂՈՅ

Արեւելեան փող կը հրատարակուի ամեն օր հատը 10 փարսյի, այսինքն Հայ աղբատիկ ընթերցասիրաց զիբրամաշէլի գնով : Խմբագրութիւնը պարտաւոր է համարելով իւր անձն կարող ու ձեռնչատ ընթերցողաց նաև այս զոհողութիւնն ընել, տարեկան բաժանորդագրութիւնը երեք կարգերու բաժանած է, իւրաքանչիւր կարգի բնարութիւն՝ բաժանորդաց կարողութեանն ու խղճին յանձնելով :

Table with 2 columns: Item name and Price. Includes items like Ա. կարգ բաժանորդ աղբ., Բ. կարգ բաժանորդ աղբ., Գ. կարգ բաժանորդ աղբ.

Ծանուցմանը ընդհանրապէս մէկ անգամի համար 1 արծամթ մէճխուի կը հրատարակուին, եթէ 10 տողէ աւելի չեն :

Աւելի անգամներու կամ 10 տողէ աւելի եղող ծանուցմանց հրատարակութեան համար մասնաւոր սակարկութիւն կը լինի :

Որ և է, գրութիւն պէտք է ուղղել առ Տնօրէն-Խմբագիրն Կ. Պօլիս Կէօզլու խան գետնայտրի թիւ 3 սենեակը :

Արեւելեան փող ձեռքէ ծախուելէ զատ կը ծախուի նաև Պաճճէ-Քափու սուճի Մ. Պօղոս աղայի խանութը, և Պէշիկթաշի Օրթագիւղի Գաթը-Ղիւղի Քնա լրկողի և Մաքրի գիւղի Ք. Հիւարի Պէշրօղի տեղական թղթատարութեան կայտարաններն :

ՏԵՐ ԼՐԱԳՐՈՅ Կ. ԵՐԶՆԿԵԱՆԵԱՆ

ՏՆՕՐԷՆ-ԻՄՐԱՊԻՐ ԲԱՐՔՈՂ, ՍՈՒՐ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Յ. ՄԻՒՀԷՆՏԻՍԵԱՆ Կ. Պօշու գեղեր խան գետնայտրի թիւ 50